ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետվություն

2021-2022 ուստարի

Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ Ուսանողական խորհուրդն իրականացրել է բավականաչափ աշխատանք՝ իր կանոնադրության և աշխատանքային պլանի համաձայն: 2021-2022 ուստարվա ընթացքում զումարվել է 8 նիստ, այդ թվում՝ 2 ընդլայնված: Բոլոր նիստերն արձանագրվել են: ՈՒԽ-ի նիստերին մասնակցել են ոչ միայն խորհրդի անդամները, այլև Ստոմատոլոգիական և Բուժական ֆակուլտետների դեկանը, պրոռեկտորը, Ուսումնական մասի վարիչը, Արտաքին կապերի բաժնի մասնագետը: ՈՒԽ նախագահը մասնակցել է Գիտխորհրդի նիստերին:

ՈՒԽ-ն 2020-2021 ուստարվա ընթացքում ապահովվել է ուսանողությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ուսանողներն իրազեկվել են իրենց իրավունքների ու պարտակա-նությունների մասին, ինչպես նաև ծանոթացել ԱԲՀ-ում գործող, նոր մշակված կամ վերանայված այն փաստաթղթերին, որոնք հատկապես վերաբերել են ուսումնական գործ-ընթացի կազմակերպմանը, ուսումնառության արդյունքների գնահատմանը և այլն:

ԱԲՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքները վերհանող մի քանի մեխանիզմներ՝ դասախոսների, դեկանի և ուսումնական մասի հետ կազմակերպվող քննարկումները, հարցումները: Խորհրդատուների աշխատանքի միջոցով բացահայտվում են ուսումնական գործընթացի կազմակերպման, գիտելիքների գնահատման համակարգի, սեփական իրավունքների իմացության և այլ խնդիրներ:

Հաշվետու ուստարում ուսանողները վերհանել են իրենց կրթական կարիքները համավարակի ժամանակ չանցկացրած պրակտիկաների, գործնական պարապմունքների, Ավանդական բժշկության ցիկլի դասընթացների՝ Ֆիտոթերապիա, Ասեղ-այրում թերապիա առարկաների ժամաքանակների հետ կապված: Վերհանված խնդիրները գտել են իրենց լուծումը, ուսանողներին տրամադրվել է համապատասխան աջակցություն:

Ուսանողներն իրենց խնդիրները, իրենց հուզող հարցերը հնարավորություն ունեն քննարկելու նաև ռեկտորի, արտաքին կապերի բաժնի մասնագետների, գիտական մասի վարիչի հետ:

Հաշվետու ուստարում ուսխորհրդի կազմում կատարվել է փոփոխություն՝ ՈՒԽ փոխ-նախագահ Կարվան Համզա Հասսան Հասսանն իր դիմումի համաձայն ինքնակամ դուրս է եկել ՈՒԽ կազմից: Բաց քվեարկության արդյունքում ՈՒԽ փոխնախագահ է ընտրվել Յուվրաժ Սինդ Թակուրը:

ՈՒԽ կազմում ընդգրկված են նախագահը, փոխնախագահը, սպորտային և մշակութային ղեկավարները, քարտուղարը և 4 անդամներ:

ԱԲՀ ղեկավարության կողմից ուսանողներին տրամադրվել են ազատ օրեր՝ ազգային հիմնական տոները (Դիվալի, Նովրուզ, Ռամադան, Հոլի) նշելու կապակցությամբ:

ՈՒԽ-ն մասնակցել է ԱԲՀ 30-ամյակին և 1-ին կուրսեցիների մերձեցմանը նվիրված միջոցառմանը և նրան նախապատրաստվելու աշխատանքներին: Կազմակերպվել են արտալսարանային միջոցառումներ՝ նախապես վերհանելով օտարերկրյա ուսանողների՝ Հայաստանի մշակույթի նկատմամբ ունեցած հետաքրքրությունները: Ուսանողներն այցելել են Էրեբունի թանգարան, Մատենադարան, ցեղասպանության զոհերի հիշատակի օրը Ծիծեռնակաբերդի պուրակում ծաղիկներ են խոնարհել հուշաքարին, մասնակցել գրադարանավարուհու կազմակերպած գրքի տոնին նվիրված միջոցառմանը, որտեղ եղել են անակնկալ նվերներ ամենաընթերցասեր ուսանողներին:

Ուսանողները մասնակցել են նաև ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անցկացված առցանց հարցումներին, շրջանավարտները՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցմանը:

Վերանայվել է ՈՒԽ կանոնադրությունը, որը գործում էր 2012 թ.-ից: Նախագիծը քննարկվել է Ուսանողական խորհրդում:

Հավելենք, որ ուսանողության հիմնախնդիրներին մեծ ուշադրություն դարձնելը և այդ խնդիրներին լիարժեք լուծում տալը մշտապես եղել է համալսարանի ղեկավարության և ուսանողական խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում:

ՈՒԽ-ն որպես տեղեկատվության տարածման հարթակ օգտագործում է ֆեյսբուք սոցիալական ցանցը:

ՈՒԽ նախագահ՝ Ա.Բաբասյան